Հաշվետվություն

2018 թվականի սեպտեմբերի 10-ից 13-ը Ղազախստանի Հանրապետությունում կայացած ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 11-րդ նիստի մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Հրաչյա Ռոստոմյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Արտակարգ իրավիճակների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, 2018թ սեպտեմբերի 10-ից 13-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարութուն:

5. **Գործուղման նպատակը.**

1. Մասնակցություն ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 11-րդ նիստին,
2. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրում,
3. Ներկա գտնվել ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում իրավասու մարմինների ստորաբաժանումների հատուկ-տակտիկական ուսումնավարժությանը:

6. **Քննարկված թեմաները.**

   Օրակարգ և նիստի արձանագրությունը կցվում են:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Համակարգող խորհրդի նիստում ելույթներով հանդես եկան ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեմերիկովը, ինչպես նաև ՀԱՊԿ

անդամ երկրների արտակարգ իրավիճակների ոլորտում լիազորված մարմինների ներկայացուցիչները (Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Ղազախստաի Հանրապետություն, Ղրղստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Տաջիկստանի Հանրապետություն, ՀԱՊԿ քարտուղարություն և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ):

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

   «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

   Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել նախատեսված և գործող բոլոր ծրագրերը: Վերահաստատվել է սերտ համագործակցության պատրաստակամությունը:

10. **Գործուղվողը.**

    Արտակարգ իրավիճակների նախարար Հրաչյա Ռոստոմյան:

11. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

    17.09.2018